Արձանագրություն N 2
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2025/33Շ» ծածկագրով բաց մրցույթ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ մեկնարկ՝ 02.05.2025թ.
ժամը 16:00:
ավարտ՝ 23.05.2025թ.
ժամը 16:00:

Մասնակցում էին՝

Նորիկ Մնոյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)
Արամ Խաչատրյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Գևորգ Խեչումյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Մանե Մալխասյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի պայմանագրերի կառավարման մասնագետ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)
Աստղիկ Խաչատրյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)
Կարեն Բաբախանյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները

1.1 ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2025/33Շ» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար
1	«ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ գ. Լիճք Ա6 թղմ. 12փ, տ1	vardangroup@mail.ru 093223288
2	«Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Սևան, Ծովագյուղ փող. 1, տուն 46	golden-karap@list.ru 077 700 994
3	«Շանթ-Սեյրան» ՍՊԸ	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վաղաշեն համայնք, նախկին օդանավակայանի տարածք 1	shantseyran@mail.ru 077 411 367
4	«Մասշտաբ» ՍՊԸ և «ԱՄ Քոնստրաքշն» ՍՊԸ կոնսորցիում	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Մարտունի, գ. Ձորագյուղ, 11փ., տ 62	g-r-grigoran@mail.ru +37477400020
5	«Գավառի ՃՇՇ» ԲԲԸ	ՀՀ, ք. Գավառ, Սայադյան 120	jorakhachatryan@mail.ru 077 17 80 10
6	«Քյավառ սերվիս» ՍՊԸ	ՀՀ, ք. Գավառ, Ազատության 41/5	qyavar.servis@mail.ru 098 68 00 00

2. *Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*.

2.1 Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

N	Մասնակցի անվանումը	Արձանագրված անհամապատասխանությունը
1	**«Մասշտաբ» ՍՊԸ և «ԱՄ Քոնստրաքշն» ՍՊԸ կոնսորցիում**	«Մասշտաբ» ՍՊԸ և «ԱՄ Քոնստրաքշն» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում ներառված հավելված 1՝ դիմում հայտարարությունում բացակայում է «ԱՄ Քոնստրաքշն» ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: «Մասշտաբ» ՍՊԸ և «ԱՄ Քոնստրաքշն» ՍՊԸ կոնսորցիումի պայմանագրով նախատեսվում է, որ շինարարական աշխատանքներն իրականացվելու են կոնսորցիումի անդամ երկու կազմակերպությունների կողմից: Սակայն հայտով ներկայացվել է միայն «ԱՄ Քոնստրաքշն» ՍՊԸ-ի համապատասխան լիցենզիան՝ ներդիրով: Շինարարական աշխատանքները կարող են կատարվել բացառապես համապատասխան ընկերության լիցենզիաների /ներդիրների/ առկայության պարագայում, անկախ այդ ընկերության կոնսորցիումի անդամ լինելու հանգամանքից:

Հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունները գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի պահանջները որոշեց «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2025/33Շ» ծածկագրով գնման ընթացակարգի բացման և գնահատման նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսել 19.05.2025թ. ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Տվյալներ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին.

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺԻՆ 1 **S-4-63, /Հ-7/-Ջիլ մարզային նշանակության ավտոճանապարհի և նորակառույց դպրոց տանող ճանապարհահատվածի հիմնանորոգման աշխատանքներ**	
	Նախահաշվային գին 593 240 567 ՀՀ դրամ	
«ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ	**332 400 000**	**398 880 000**
«Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ	444 930 425	533 916 510

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺԻՆ 2 **ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Մյասնիկյան, Գ. Զիրոյան և Սայաթ Նովա փողոցների խաչմերուկից մինչև Ն. Գետաշեն բնակավայրի թիվ 2 միջնակարգ դպրոցի խաչմերուկ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ**	
	Նախահաշվային գին 1 010 621 730 ՀՀ դրամ	
«Շանթ-Սեյրան» ՍՊԸ	**614 750 000**	**737 700 000**
«ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ	657 407 400	788 888 880

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺԻՆ 3 **ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի գյուղ Բերդկունքի կենտրոնական փողոցի մի հատվածի ասֆալտապատման աշխատանքներ**	
	Նախահաշվային գին 112 900 918 ՀՀ դրամ	
«Մասշտաբ» ՍՊԸ և «ԱՄ Քոնստրաքշն» ՍՊԸ կոնսորցիում	**64 588 733**	**77 506 480**
«Գավառի ՃՇՇ» ԲԲԸ	70 000 000	84 000 000
«Քյավառ սերվիս» ՍՊԸ	74 900 000	89 880 000

Հիմք ընդունելով գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը ***որոշեց.***

- Որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2025/33Շ» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչել՝ 1-ին չափաբաժնի մասով՝ «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ -ին, 2-րդ չափաբաժնի մասով՝ «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ին, 3-րդ չափաբաժնի մասով՝ «Մասշտաբ» ՍՊԸ և «ԱՄ Քոնստրաքշն» ՍՊԸ կոնսորցիումին:

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

- <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

- Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա

ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 30 (երեսուն) տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Մնոյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Խաչատրյան

Գ. Խեչումյան

Մ. Մալխասյան

Ա. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Կ. Բաբախանյան